*Հաստատված է*

*Դպրոցի տնօրենի ժպ՝ Ս. Պետրոսյան*

*------04------սեպտեմբեր---------2023թ,*

# Արմավիրի մարզի Թաիրովի միջնակարգ դպրոցի բնագիտական առարկաների մեթոդական միավորման 2023-2024 ուստարվա տարեկան աշխատանքային պլան

*Մեթոդական միավորման նախագահ՝ Վ.Ծատրյան*

## Մասնախմբի կազմի կրթական և աշխատանքային տվյալների մասին աղյուսակ

| ՀՀ | Ազգանունը, անունը, հայրանունը | Ծննդյան թիվը | Կրթությունը | Որակավորումը | Ստաժը | Ինչ առարկա է դասավանդում | Դասավանդվող դասարանները | Շաբաթ. ժամերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ծատրյան Վարդուհի Արամի | 1967թ. | Բարձրագույն ԵՊՀ | Ուսուցիչ | 16տ | Ֆիզիկա | 7-12 | 28ժ |
| 2 | Պետրոսյան Սաթենիկ Կիմիկի | 1961թ. | Բարձրագույն ԵՊՀ | Ուսուցիչ | 34տ | Կենսաբանություն | 8,11 | 8ժ |
| 3 | Մախտեսյան Նարինե Թելմանի | 1968թ. | Բարձրագույն ԵՊՀ | Ուսուցիչ | 19տ | Աշխարհագրություն | 6-12 | 26ժ |
| 4 | Մնացականյան Մարիամ Աշոտի | 1982թ. | Բարձրագույն ԵՊՄՀ | Ուսուցիչ | 19տ | Ինֆորմատիկա | 2-12 | 18ժ |
| 5 | Խաչատրյան Հասմիկ Սամվելի | 1986թ | Բարձրագույն ԵՊՄՀ | Ուսուցիչ | 3տ | Քիմիա | 7-12 | 22ժ |
| 6 | Եղիազարյան Քնարիկ Արմենի | 1979թ. | Բարձրագույն ԵՊՀ | Ուսուցիչ | 2տ | Բնագիտություն | 6 | 4ժ |
| 7 | Պապիկյան Զարուհի Խաչատուրի | 1956թ. | Բարձրագույն ԵՊՄՀ | Ուսուցիչ | 23տ | Կենսաբանություն | 5,7,9, 10, 12 | 20ժ |

**2023-2024 ուսումնական տարում բնագիտական առարկաների մեթոդական միավորման գլխավոր խնդիրներն են՝**

1. Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

2. Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել բնագիտական առարկաների դասավանդումը՝ օգտագործելով նորագույն տեխնոլոգիաներ և անցկացնելով ինտեգրված դասեր:

3. Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտների հետազոտական աշխատանքների կազմակերպմանը՝ կիրառելով համապատասխան մեթոդներ /նախագծեր, համագործակցային մեթոդներ /:

4. Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

5. Կազմակերպել սեմինար-քննարկումներ՝ ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:

6. Ուսումնասիրել կրթության վերաբերյալ համացանցում տեղադրված համապատասխան նյութերը և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման և բաց դասերի միջոցով:

| ՀՀ | Գործողություն | Ժամանակ | Կատարող |
|---|---|---|---|
| 1. | 1. Մ/մ կազմի հաստատում, 2023-24 ուստարում բնագիտական առարկաների մեթոդական միավորման նախագահի թեկնածուի առաջադրում<br>2.Ուսուցչի պաշտոնային պարտականությունների ներկայացում<br>3.Նախորդ ուստարվա աշխատանքների արդյունքների ամփոփում, նոր ուստարվա խնդիրների և անելիքների քննարկում<br>4.Մ/մ տարեկան աշխատանքային պլանի նախագծի քննարկում<br>5. Համադպրոցական ուսումնական պլանի՝ պետական և դպրոցական բաղադրիչների ժամաքանակների բաշխման առաջարկությունների մշակում<br>6.Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերի, դասագրքերի, ձեռնարկների, մեթոդական ձեռնարկների, նամակների քննարկում<br>7.Կրթական բարեփոխումների և նորությունների մասսայականացում<br>8.ԿԱՊԿ աշակերտների նոր ուստարվա ԱՈՒՊ-ների մշակում<br>9. Բանավոր, գործնական և թեմատիկ աշխատանքների թվի որոշում<br>10. Սովորողներին դասագրքերով և այլ ուսումնական գրականությամբ ապահովելու հետ առնչվող խնդիրների քննարկում:<br>11. Ձևավորող գնահատման ձևերի և քանակների մասին քննարկում<br>12. 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում **ԹԳՀԳ, մաթեմատիկա, բնություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն** առարկաների նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների քննարկում | Օգոստոսի չորրորդ շաբաթ | մ/մ նախագահ մ/մ անդամներ |
| 2. | 1.Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում<br>2. Օրվա դասի պլանների մշակման և կազմման հարցի քննարկում<br>3.Սովորողների գիտելիքների , դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների , մեթոդների քննարկում , կիրառում<br>4.Էլեկտրոնային մատենավարության կարգի ներկայացում<br>5.Բազմամասնագիտական թիմի հետ համատեղ աշխատանքների քննարկում:<br>6. Փոխադարձ դասալսումների կազմակերպում<br>7. Նախագծային աշխատանքների իրականացման խնդիրների քննարկում. | Սեպտեմբեր | մ/մ նախագահ մ/մ անդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| | (**7-րդ դասարանում ֆիզիկա** առարկայից նախատեսված նախագծային աշխատանքի նպատակների, խնդիրների, վերջնարդյունքների , իրականացման փուլերի, գնահատման ձևերի շուրջ քննարկում) | | |
| 3. | 1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում<br>2. Մեթոդամանկավարժական զեկուցում մ/մ անդամի կողմից **<<Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը բնագիտական առարկաների ուսուցման գործընթացում>>**<br>3.Աշխատանք սկսնակ ուսուցիչների հետ ,նրանց համար մեթոդամանկավարժական օգնության կազմակերպում;<br>4. Քննարկումներ դասավանդման առկա խնդիրների վերաբերյալ , կարիքների գնահատում:<br>5. Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրում , ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում<br>6. Փոխադարձ դասալսումների արդյունքների վերլուծություն<br>7. Սովորողներին հանձնարարվող տնային աշխատանքի տեսակների, ծավալների մասին քննարկում<br>8. Հերթական պարտադիր վերապատրաստման բովանդակության և ընթացքի վերաբերյալ վերապատրաստում անցած ուսուցչի կարծիքի և այդ ուսուցչի մոտ կատարված դասալսումների արդյունքների քննարկում<br>(Վ.Ծատրյան, Ն.Մահտեսյան, Մ.Մնացականյան) | Հոկտեմբեր | մ/մ նախագահ մ/մ անդամներ |
| 4. | 1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում<br>2.Թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության և արդյունքների վերլուծություն<br>3. Գնահատման մեթոդաբանության ճիշտ կիրառման ստուգում<br>4. Բնագիտական առարկայական շաբաթների կազմակերպում և անցկացում<br>5. Համացանցի կրթական կայքերի , մասնագիտական ամսագրերի և թերթերի նյութերի ուսումնասիրում և քննարկում<br>6. Պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների հետազոտական | Նոյեմբեր | մ/մ նախագահ մ/մ անդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանքների ներկայացում մմ մյուս անդամներին<br>**Գործնական աշխատանքների դերը աշակերտների մոտիվացվածության բարձրացման վրա**- Վ.Ծատրյան<br>**Սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը բնագիտական առարկաներն ուսումնասիրելիս**- Ն.Մահտեսյան<br>7. Կազմակերպել միջոցառում <<**Քիմիան կենցաղում**>> -9-րդ դասարան<br>8, Կազմակերպել **այցելություն բնության թանգարան**—6-րդ դաս. | | |
| 5. | 1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում<br>2. Կատարողականի ստուգում<br>3. Առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների ամփոփում<br>4. 2023-24 ուստարվա 2-րդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների քննարկում, կազմակերպում<br>5. 12-րդ դասարանի ծրագրերի քննարկում<br>6. **Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, ինֆորմատիկա** առարկաներից առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի նախապատրաստում:<br>**7.** Բնագիտական առարկաների ուսուցման որակի ուսումնասիրությունների կազմակերպում,արդյունքների քննարկում մեթոդական միավորման նիստում<br>8. Կազմակերպել **վիկտորինա ֆիզիկայից**- 7-րդ դաս,<br>9. Կազմակերպել բաց դաս 8-րդ դասարանում կենսաբանություն առարկայից <<**Արյունատար համակարգ**>> թեմայով: | Դեկտեմբեր | մ/մ նախագահ մ/մ անդամներ |
| 6. | 1.Երկրորդ կիսամյակում 12-րդ դասարանում բնագիտական առարկաների թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում<br>2. Բաց դասերի, քննարկումների,դասախոսությունների կազմակերպում<br>3.Սկսնակ ուսուցիչների համար մեթոդամանկավարժական օգնության կազմակերպում<br>4. ՏՀՏ դասերի անցկացում Ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն, քիմիա առարկաներից:<br>5.2-րդ . 5-րդ և 7-րդ դասարանների նոր ծրագրերի , դասագրքերի և մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում | Հունվար | մ/մ նախագահ մ/մ անդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| | 6. Մեթոդամանկավարժական զեկուցում<br>**Միջառարկայական կապերը աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաների շրջանակներում**<br>7. Հերթական պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչների կողմից նոր մոտեցումների կիրառման դիտարկում<br>8. Կազմակերպել միջոցառում ֆիզիկայից 8-րդ դասարանում <<**Պատանի փորձարար**>> խորագրով | | |
| 7. | 1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում<br>2. Պլանավորված աշխատանքների արդյունքների ուսումնասիրման նպատակով քննարկման անցկացում<br>3. ՈՒսուցիչների որակավորման բարձրացմանը , հերթական ատեստավորման նրանց նախապատրաստմանն ուղղված քայլերի իրականացում<br>4. Մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվությունների կազմակերպում<br>5. Կազմակերպել աշակերտական գիտաժողով <<**Վնասակար սովորույթներ և հետևանքներ**>> խորագրով - 11-րդ դասարան | Փետրվար | մ/մ նախագահ<br>մ/մ անդամներ |
| 8. | 1. ՈՒսուցիչների որակավորման բարձրացմանը ուղղված քայլերի ձեռնարկում<br>2.Առարկայական շաբաթների կազմակերպում<br>3.Աշակերտակենտրոն ուսուցման ավանդական և արդիական մեթոդների համադրության կիրառում և դիտարկում<br>4.Մասնագիտական զարգացման ուսումնասիրություն<br>5. Մեթոդամանկավարժական զեկուցում <<**Ձևավորող գնահատում**>> թեմայով:<br>6. 7-րդ դասարաններում վերջնարդյունքների ապահովման նպատակով քիմիա, կենսաբանություն առարկաներից սովորողների կարողությունների զարգացման գնահատում կազմակերպելու հարցը<br>7.Բնագիտական առարկաների ուսուցման ընթացքում դերային ներկայացումների կիրառման փորձի դիտարկում<br>8. Կազմակերպել միջոցառում <<**Ապահով համացանց**>> թեմայով 6-9-րդ դաս., | Մարտ | մ/մ նախագահ<br>մ/մ անդամներ |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | 1. Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում<br>2. Դասալսումների քննարկում և վերլուծություն<br>3. Մեթոդամանկավարժական զեկուցում **<<Գործնական աշխատանքների կազմակերպում և գնահատում>>** թեմայով:<br>4. Սովորողների գիտելիքների, գործնական հմտությունների, կարողությունների, արժեքային համակարգի ձևավորման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովում<br>5. Չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովման ստուգում 5-րդ դասարանում /ինֆորմատիկա,բնություն առարկաներից /<br>6. Կազմակերպել միջոցառում **<<Զարմանահրաշ տիեզերք>>** խորագրով աստղագիտությունից – 9-րդ դաս.<br>7. Կազմակերպել բաց դաս **<<Մետաղներ>>** թեմայով - 10-րդ դասարան,քիմիա | Ապրիլ | մ/մ նախագահ մ/մ անդամներ |
| 10. | 1. Թեմատիկ գրավոր աշխատանքների կառուցվածքի և բովանդակության վերլուծություն, արդյունքների քննարկում<br>2. Ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում<br>3. 120 -200 և ավելի ժամ բացակայություն ունեցող աշակերտների քննությունների կազմակերպում<br>4. Չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովման ստուգում 7-րդ դասարանում /ֆիզիկա, , աշխարհագրություն առարկաներից /<br>5. Կազմակերպել աշակերտական գիտաժողով **<<Հայաստանի բնապահպանական հիմնախնդիրները>>** խորագրով —11-րդ դաս, | Մայիս | մ/մ նախագահ մ/մ անդամներ |
| 11. | 1. Հաստատության սովորողների համար կազմակերպված ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն և ամփոփում:<br>2.2րդ կիսամյակի արդյունքների ամփոփում<br>3.Ուստարվա կատարած աշխատանքների վերլուծություն, ամփոփում<br>4. Էլեկտրոնային մատյանը վարելու որակի վերահսկողություն | Հունիս | մ/մ նախագահ մ/մ անդամներ |